տնտեսության զարգացման մոտակա հեռանկարի հետ կապված գիտական աշխատանքների մասին» հարցը:

Ժողովին մասնակցեցին նշանավոր գիտնականներ, խոշոր հետազոտական հիմնարկների և ձեռնարկությունների ղեկավարներ, պլանային և անտեսական մարմինների հերկայացուցիչներ:

Ժողովին մասնակցեցին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը, հանրապետության Մինիստրների սովետի նախագահ Դ. Ա. Արզումանյանը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Վ. Բ. Ղալումյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի տեղակալներ Ռ. Ք. Ավետիսյան, Ս. Լ. Թումանյանը:

Ժողովում զեկուցումով հանդես եկավ ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը:

Վերջին ժամանակներս հանրապետության գիտությունների ակադեմիայի հիմնարկներում մշակվել են մի շարք թեմաներ, որոնք կարևոր նշանակություն ունեն ժողովրդական տնտեսության համար: Իրենց ելույթներում դրանց մասին պատմեցին Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ա. Բ. Նալբանդյանը, Գ. Ս. Դավթյանը, ակադեմիայի թղթակից-անդամներ Ս. Հ. Վարդանյանը, Ա. Ա. Գալոյանը, Է. Գ. Աֆրիկյանը և ուրիշներ:

Ակադեմիայի և նրա ինստիտուտների աշխատանքի կազմակերպման առանձին բերությունների մասին իրենց ելույթներում խոսեցին Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ա. Ղ. Իսսիֆյանը, Գ. Ա. Բաբայանը և ժողովի այլ մասնակիցներ:

Սակայն հիշտ չէր լինի «գիտություն-արտադրություն» օղակի բոլոր բերությունների ամբողջ պատասխանատվությունը բարդել գիտնականների վրա: Այս մասին խոսեցին Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Է. Հ. Միրզաբեկյանը, Ա. Ի. Ալիխանյանը, ակադեմիայի թղթակից-անդամներ Ֆ. Տ. Սարգսյանը, Վ. Վ. Ակեֆսեևսկին, Մ. Լ. Տեր-Միքայելյանը:

Ժողովում ելույթ ունեցած ակադեմիայի անդամները խոսեցին այն մասին, որ անհրաժեշտ է վերանայել գիտական և արտադրական կազմակերպությունների համար կադրերի պատրաստման սիստեմները: Հանրապետության ժողովրդական տնտեսության ժամանակակից նյութերի և գիտական ուղղությունների զարգացման շահերը պահանջում են վճռականորեն փոխել մասնագետների պատրաստման ավանդական համամասնությունները, առավելություն տալով էլեկտրոնային հաշվողական տեխնիկայի, արդյունաբերական կենսաբանության, երկրաբանության մասնագետների պատրաստմանը:

Օրակարգի քննարկման ընթացքում առաջարկներ արվեցին ժողովրդական տնտեսության այս կամ այն նյութի զարգացման, գիտատեխնիկական առաջադիմության նվաճումների արմատավորման վերաբերյալ: Ժողովում ելույթներ ունեցան նաև Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ա. Ա. Առաքելյանը, Վ. Հ. Ղազարյանը, Գ. Բ. Ղարիբջանյանը, ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Տ. Ալանյանը և ուրիշներ:

Ընդհանուր ժողովի մասնակիցները Հայաստանի կոմկուսի Կենտրոնական կոմիտեին ներկայացրին, որ ակադեմիայի գիտական կոլեկտիվները ամբողջ ակտիվությամբ կմասնակցեն Կենտկոմի հուլիսյան պլենումի որոշումների կենսագործմանը, որոնք հանրապետության աշխատավորներին մոբիլիզացնում են կատարելու ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի որոշումը:

(ԱՐՄԵՆՊՐԵՍ)

ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Երկրորդ տարին է, որ ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտը Մոսկվայում կազմակերպում է Արևելքի միջնադարյան պատմությանը նվիրված «Բարտոլդյան[1] ընթերցումներ»:

Այս տարվա ընթերցումները նվիրված էին ֆեոդալական սեփական հողատիրությանն (միլք, մուլք)[2] ու պարգևական տիրույթներին (իկթա), արձանագրություններ: Նա հեղինակ է Իսլամի հանրագիտարանում Հայաստանի մի շարք քաղաքների (Անի, Կարս) մասին հոդվածների:

2 Միլքը (համապատասխանում է հայկական «հայրենիքին») միջնադարյան Արևելքում հողի մասնավոր սեփականության ձև էր: Օմայան խալիֆայության ժամանակ, երբ պետական հողատիրությունը մեծ տարածում ուներ, միլք հողերը համեմատաբար քիչ էին, բայց աստիճանաբար ընդարձակվեցին: Ժամանակի ընթաց-

1 Վ. Վ. Բարտոլդը (1869—1930) ռուսական արևելագիտության խոշորագույն դեմքերից է: Արևելյան միջնադարի մասին նա գրել է բազմաթիվ աշխատություններ, որոնցից առանձնապես հայտնի է «Թուրքիստանը մոնղոլական արշավանքների ժամանակաշրջանում» երկհատոր մենագրությունը: Զբաղվել է նաև Հայաստանի պատմության որոշ հարցերով, հրատարակել է Անիի Մանուչեի աշտարակի պարսկերեն

ինչպես նաև Վ. Վ. Բարտոլդի գիտական ժառանգությանն առնչվող հարցերին։

Հողատիրության ընդհանուր հարցերին էր նվիրված Օ. Դ. Չեխովիչի (Տաշքենդ) «Վ. Վ. Բարտոլդը և միլքի հարցի հետագա ուսումնասիրման ուղիները» ընդհանրացնող զեկուցումը։ Զեկուցողը նախ ներկայացրեց Վ. Վ. Բարտոլդի հայացքները միլքի մասին։ Չեռքի տակ չունենալով այն հարուստ վավերագրերը, որոնք իր մահվանից հետո լույս ընծայվեցին, Բարտոլդը այն կարծիքին էր եղել, որ միլքը միայն ապահարկ մասնավոր սեփականություն է (միլքի հուրը ու խալիս)։ Ի՞նարկե եղել է սեփականության այդպիսի ձև, բայց դրա կողքին եղել են նաև հողային սեփականության բազմաթիվ այլ ձևեր։ Օ. Դ. Չեխովիչը ցույց տվեց, որ Արաբական խալիֆայության կազմավորման ընթացքում նվաճված երկրների տեղական առանձնահատկությունները չվերացան, թեև գոյացել էին որոշ ընդհանրություններ։ Հողի մասնավոր սեփականությունը, որը մահմեդական իրավագիտության մեջ միլք անունն ստացավ, գոյություն ուներ դեռ շատ ավելի վաղ, քան խալիֆայությունը, բայց միլք բառը, որպես իրավաբանական հասկացություն, հանդես եկավ VIII դարում։

Հողային սեփականության, առք ու վաճառքի և կամ ապահարկ դարձնելու վավերագրերը, որոնք Վ. Վ. Բարտոլդի մահվանից հետո հայտնաբերվեցին, ցույց են տալիս, որ հատկապես ուշ միջնադարում եղել են միլքի շատ տարատեսակներ՝ մուլքակ (բացարձակ), մաուրուսի (ժառանգական), գարխարիդ (գանձագին), խարաջի (հողահարկային), հուրը (ազատ), սուլհի (պայմանագրային) և այլն։ Մահմեդական իրավագիտությունը հիմնականում ճանաչում է միլք ձեռք բերելու երեք միջոց՝ «մեոյալ» (խոպան) հողերի մշակում, ժառանգում և գնում (կամ նվիրատվություն)։ Միլքի այն ձևը, երբ հողատերը իր կալվածքների 2/3-ը պետությանը (թագավորին) գիջելով, մնացած 1/3-ը լրիվ ապահարկ էր դարձնում, միջինասիական վավերագրերում հանդիպում է XV դարից սկսած և հասնում մինչև XIX դարի սկիզբը։

Ն. Ա. Դավիդովիչի (Մոսկվա) զեկուցումը («Միլքային հողային սեփականությունը Միջին Ասիայում XVI—XVIII դարերում ըստ վավերագրային աղբյուրների») նվիրված էր միլքի առանձին ձևերի բացահայտմանը։ Նա ցույց տվեց, որ ավատական հողատիրությունը պետք է տարբերել անմիջական արտադրողի ունեցած սեփականությունից, ընդ որում XVI—XVIII դդ. հնարավոր էր գյուղացիական միլքի վերածումը ավատատիրոջը պատկանող միլքի։ Ավատական միլքի գլխավոր հատկանիշը նա համարում է այդ տիրույթների բաժանումը պետության և հողատիրոջ միջև։ Այս պարագային, ինչպես արդեն նշվեց, հողատերը իր հողի 2/3-ը պետությանը գիջելով, մնացած 1/3-ը դարձնում է ապահարկ, առանց պայմանի, մասնավոր սեփականություն (միլքի հուրը՝ ազատ սեփականություն)։

Միջնադարյան Արևելքում հողի մասնավոր ժառանգական սեփականությունը հատկապես ուժեղ էր Հայաստանում, Իրանում և որոշ այլ երկրներում։ Այդ մասին են վկայում Հայաստանի ուշ միջնադարին վերաբերող հարուստ վավերագրերը, որոնցից մեկի ուսումնասիրությանն էր նվիրված Հ. Դ. Փափազյանի զեկուցումը՝ «Մուլք, մալիք և մալիքանե հասկացությունները ըստ Էջմիածնին պատկանող գյուղերի զաբալե-վակֆնամեի (1431 թ.)»։ Իշխան Ռուստամ Օրբելյանի՝ 1431 թ. Գրիգոր Մակվեցու անունով տված այս կալվածագիրը (որը հիշված է Սիմեոն Երևանցու «Ջամբռումս») մինչև օրս հայտնի էր միայն XIX դարի պատճենով, սակայն վերջերս հայտնաբերվեց այդ վավերագրի չափազանց արժեքավոր բնագիրը։ Զեկուցողը ցույց տվեց, թե ինչպես Էջմիածնապատկան գյուղերը շարիաթական իրավական ըմբռնմամբ անվանվում են մուլք (սեփականություն), իսկ գնող գյուղացիները՝ մալիք (սեփականատեր) և նույնիսկ ամեն մի գյուղից գանձվող հասույթը՝ բահրեի մալիքանե (սեփականատիրոջ բաժին՝ բնահարկ)։

Ոչ մահմեդական հողատերերի կալվածատիրական իրավունքների հարցը արևելագիտության մեջ դեռ չլուծված խնդիրներից է։ Այս հարցին նվիրված «Հայ նախարարների տիրույթները VII—IX դարերում՝ միլքային (մուլքային) հողեր էին» (Ա. Տեր-Ղևոնդյան) զեկուցման մեջ հեղինակը մահմեդական իրավագետների տրվյալներով ցույց տվեց, որ իրականում ոչ մահմեդականը իրավունք ուներ հողի սեփականատեր դառնալ՝ միայն թե ստիպված էր բոլոր դեպքերում հողահարկ (խարաջ) վճարել, մինչդեռ մահմեդական հողատերը իր միլքի համար

քում արդեն իրարից տարբերվում էին միլք (սեփականություն) և մուլք (իշխանություն) հասկացությունները։ Միլք էին կոչվում ոչ միայն ավատատիրոջը, այլև գյուղացուն պատկանող հողերը, ինչպես նաև համայնքի հողերը («միլք ումումի»)։ Միլքի տերը, ըստ մահմեդական իրավագիտության («ֆիկհ»), պետք է հիմնականում վճարեր տասանորդ («ուշր»)։ Հարկ է նշել, որ գրության նմանության հետևանքով, հետագայում այդ տարբերությունը վերացել է և մուլքը Արևելքում այսօր ևս օգտագործվում է սեփականության իմաստով։

հիմնականում տասանորդ (ուշր) էր վճարում։

Դաղստանի հողատիրությանը նվիրված մի շարք զեկուցումների հեղինակներ (Ա. Ռ. Շիխսայիդով, Տ. Մ. Այտպերով, Մ. Ռ. Մուգուման՝ բոլորն էլ Մախաչկալայից) ցույց տվեցին, որ մոտավորապես X դարից Դաղստանում եղել են սեփականատիրական հողեր (միլք), որոնց մասին վկայում են արաբ պատմիչները։ Բայց դրանք սերտորեն կապված են եղել գյուղական համայնքի հետ։ Կենտրոնական Ասիայում Թուրքական ցեղերի մոտ հողային սեփականության նախնական ձևերին էր նվիրված Ս. Գ. Կլյաշտորնի («Հողային սեփականության մասին Թուրքական խաքանության մեջ» զեկուցումը։

Զեկուցողները թեև ընտրել էին տարբեր երկրներին և ժամանակներին վերաբերող նյութեր, այսուհանդերձ ընդհանուր եզրակացությունն այն էր, որ անհրաժեշտ է ընդհանրությունների հետ մեկտեղ նկատի առնել յուրաքանչյուր երկրի առանձնահատկությունները և տարբեր դարաշրջաններում հողատիրության ձևերի կրած փոփոխությունները։ Այս հարցում կարևորագույն նշանակություն ունեն հողատիրությանը վերաբերող նորահայտ վավերագրերը։ Զեկուցողները հատկապես նշեցին Օ. Դ. Չեխովիչի, Հ. Դ. Փափազյանի և այլոց հրատարակած վավերագրային սկզբնաղբյուրների նշանակությունը։

«Բարտոլդյան ընթերցումների» օրակարգի երկրորդ հարցը միջնադարյան Արևելքում պարգևական հողատիրությունն էր (իկթա)։ Խալիֆայության ժամանակ գոյություն ուներ երկու տեսակ իկթա՝ թամլիք (տիրապետության իրավունքով) և իջարա (հողի եկամուտը ստանալու իրավունքով)։ Առաջին դեպքում տրվում էին «մեռյալ» (խոպան) հողեր, որոնց համար հողահարկ (խարաջ) էր վճարվում և դրանք կարող էին որոշ ժամանակ հետո ժառանգաբար անցնել մշակողի հետնորդներին, իսկ երկրորդ դեպքում հողը ստացողը կարող էր միայն հողահարկը ստանալ։ «Իկթայի հարցի շուրջը՝ խալիֆայության մեջ VIII դարում» զեկուցման հեղինակ է. Տ. Սիխարուլիձեն (Թբիլիսի) ցույց տվեց, որ ըստ VIII դարի իրավագետ Արու Յուսուֆի տվյալների իկթան տրվում էր զինվորական կամ պետական ծառայությունների դիմաց, ընդ որում այն ստացողը վճարում էր հողահարկ կամ տասանորդ։

Իկթայի վերաբերյալ զեկուցումները ընդհանրապես նվիրված են XI դարից հետո ընկած ժամանակաշրջանին, երբ պարգևական հողատիրությունը լայն տարածում ստացավ։ «Ուլեների հողերը» զեկուցման հեղինակ Ռ. Հուսեյնովը (Բաքու) ընթերցության էր առել սելջուկյան պետությունների մեջ գոյություն ունեցող «ուլ» կոչված (նշանակում է՝ ծայր, սահման) պարգևական հողերը, որոնք տրվում էին զինվորական ծառայության դիմաց, բայց ժամանակի ընթացքում դառնում էին ժառանգական սեփականություն։ Իկթան սերտորեն կապված էր պետական հողատիրության հետ (մահմեդական իրավագիտության մեջ իկթա հողերը պաշտոնապես համարվում էին պետական հողեր) և տարածված էր Ասորիքում, Միջագետքում, Ատրպատականում, Շիրվանում և միջինասիական երկրներում։ Ահա այս վերջին երկրների իկթայի առանձնահատկություններին էին նվիրված Ս. Բ. Աշուրբեյլիի (Բաքու) «Ավատական պարգևական հողերը Շիրվանում XV—XVII դարերում», Ա. Ա. Եգանիի (Դուշանբե) «Ռայաթի և Յաբիսի ինստիտուտները ուշ միջնադարյան Միջին Ասիայում», Բ. Ա. Ահմեդովի (Տաշքենդ) «Իկթան Միջին Ասիայում XVI—XVII դարերում» և այլոց զեկուցումները։ Իր հակիրճ հաղորդումով Ռ. Դ. Մուկմինովան (Տաշքենդ) ընդգծեց միջինասիական «թիուլի» առանձնահատկությունները։

«Ընթերցումների» օրակարգի երրորդ հարցը Վ. Վ. Բարտոլդի գիտական ժառանգությանն էր վերաբերում։ Զեկուցողները նշեցին, որ մեծանուն գիտնականը թողել է բազմաթիվ անտիպ նամակներ, զեկուցումներ, որոնք վերաբերում են Միջին Ասիայի պատմությանը և գիտության զարգացման հարցերին։

Դիտական համաժողովի մասնակիցները քննության առան նաև հողատիրությանը և ագրարային հարաբերություններին վերաբերող պատմական-պաշտոնական վավերագրերի՝ որպես այդ հարցին վերաբերող ամենահավաստի սկզբնաղբյուրների, գիտական նկարագրությունների պարբերական հրատարակության հարցը։ Եղան գիտական նկարագրության նախագծերի առաջարկներ, որոնք հիմնականում հավանության արժանացան մասնագետների կողմից։

«Բարտոլդյան ընթերցումները» կշարունակվեն նաև հաջորդ տարի՝ 1976-ին. քննության կառնվեն միջնադարյան Արևելքի քաղաքներին, արհեստներին ու առևտրին առնչվող հարցեր։

Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ